ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի ապրիլի 10-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25/2**

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀի կարիքների համար համակարգչային սարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25/2 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված հրավերում 1-2-րդ չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրերում տեղի է ունեցել վրիպակ և անհրաժեշտ է Հավելված 1-ով ներկայացված Տեխնիկական բնութագիրը և կից ֆայլով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերի «պրոյեկտրի» տեխնիկական բնութագրերը ներկայացնել նոր խմբագրությամբ:

Փոփոխության նկարագրություն: Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով հրավերի Հավելված 1-ով ներկայացված ապրանքի նկարագիրը և կից ֆայլով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերի «պրոյեկտրի» տեխնիկական բնութագիրը շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ.

«Տեխնիկական բնութագրերը ներկայացվում են ստորև, Հավելված 1-ով: Միաժամանակ, մատակարարը պարտավոր է ապահովել.

• Տեղերում համակարգիչներում նախապես տեղադրված օպերացիոն համակարգի ստուգում և անհրաժեշտության դեպքում կարգաբերում:

• Դասասենյակների համար նախատեսված պրոյեկտորի պատի/առաստաղի ամրացման հավաքածուի և պրոյեկտորի էկրանի տեղադրում և համապատասխան պրոյեկտորի կարգաբերում:

• Ապափաթեթավորում, արտաքին վնասվածքների ստուգում:»

«Պրոյեկտոր/ Projector Տեխնոլոգիա՝ led laser
Հեռավորության դասակարգում՝ Short Throw
Aspect Ratio. Հիմնական 16:9, 4:3, 16:10 հնարավոր,
Full HD 1080p (1920×1080) հիմնական,
Մին. 4000 լյումեն,
Լամպի կյանքը՝ մին. 20000ժ
(Ստանդարտ), 30000h (Էկոնոմ),
HDMI մուտք, USB 2.0,
Ներառված է հոսանքի լար,
հեռակառավարման վահանակ և
մարտկոցներ, ինտեգրված բարձրախոս,
HDMI 2.1 մալուխ 10 մ,
220V-240V/50-60Hz (սնուցման լարը
schuko վարդակից), Ներառյալ պրոյեկտորի պատին ամրացման հավաքածու
Երաշխիք՝ 3 տարի
Արտադրողից/Դիստրիբյուտորից
երաշխիքային նամակ (MAF-
DAF) - Պահանջվում է»

Փոփոխության հիմնավորում: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Առաքելյանին:

Հեռախոս՝ +374 98 389 689 (ներքին հեռախոսահամար՝ 05)
Էլ. փոստ՝ a.arakelyan@promotion.am
Պատվիրատու՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀի